Հավելված
Հաստատված է Ոստան համայնքի
ավագանու 19.11.2014թ. թիվ 24 որոշմամբ

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015թ.-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբեկտների համար՝

ա) մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ----------7500 դրամ:

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------10000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար --------15000 դրամ.

բգ) 1001-ից ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար---------- 17500 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝----------750 դրամ.

դ) 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար----------1250 դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման , արդիականացման , աշխատանքների (բացառությամբՀայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝----------750 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրուքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրոնքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ---------- 1250 դրամ.

1-3 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝------ 3750 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար-
---3750 դրամ.

5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ յուրաքանչյուր քառ.մետրի համար՝----------350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ---------- ----------150000 դրամ:

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ ---------- 30000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար----------25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար----------50 000 դրամ.

գ) բաղնիքների /սաունաների/ համար ----------200 000 դրամ

դ) խաղատների կազմակերպման համար----------500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար---------- 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար---------- 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝---------- 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝---------- 3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝----------1000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝---------- 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել---------- 300 դրամ:

10. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝ սահմանել----------3 000 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ ----------500 դրամ:

2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար---------- 500 դրամ:

3) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու համար կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ:

4) Համայնքի տարածքում աղբահանության վճարը սահմանել՝

ա/ Կենցաղային աղբի համար՝ յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 /հիսուն/ դրամ:
բ/ Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ, կամ ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:
գ/ Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը համարել օրացուցային ամիսը:
դ/ Անշարժ գույքի սեփականատիրոջ՝ ցանկացած հիմքով փոփոխության դեպքում, նոր սեփականատիրոջն է անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփանատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ